

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԵՏԱԴԱՐԱՆՆԵՐԻ ԱԶԳԱՅԻՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
ՊԱՏՄԱՌԹՅԱՆ ԻՆՍՏԻՏԱՒՏ

բնագրի իրավունքով

ՄԱՆՈՒԿՅԱՆ ԱՐՄԵՆԱԿ ՍԱՐԻՔԵԿԻ

ԽՈՐՀՐԴԱՅԻՆ ԻՇԽԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԵԿԵՂԵՑԻՆ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ 1920—1940 ԹԹ.

Մասնագիտությունը. Հայոց պատմություն է. 00.01

Պատմական գիտությունների բեկնածուի գիտական
աստիճանի հայցման ատենախոսություն

ՍԵՂՄԱԳԻՐ

ԵՐԵՎԱՆ — 1997

Աշխատանքը կատարվել է ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտում:

Գիտական խորհրդատու պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Վ. Ն. ՂԱԶԱՆՅԱՆ

Պաշտոնական ընդգրկմանը պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Գ. Մ. ԳԵՂԱՄՅԱՆ

պատմական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր
Կ. Ս. ԽՈՒԴԱՎԵՐԳՅԱՆ

Առաջատար կազմակերպություն Երևանի պետական համալսարանի հայ ժողովրդի պատմության ամբիոն

Ատենախոսության պաշտպանությունը կայանալու է «21» հոկտեմբերի 1997 թ. ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան շնորհող 004 Հայոց պատմության մասնագիտական խորհրդի նիստում (375019, Երևան, Մարշալ Բաղրամյանի 24 գ.):

Ատենախոսության հետ կապելի է ծանոթանալ ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի գրադարանում:

Սեղմագիրը առաքված է «21» սեպտեմբերի 1997 թ.

Մասնագիտական խորհրդի գիտական ֆարուստ, պատմական գիտությունների քեկնածու  Մ. ՄԵԼՔՈՆՅԱՆ

Աշխատանքի ընդհանուր բնութագիրը. Ատենախոսությունը նվիրված է 1920—1940 թթ. Հայաստանի իշխանություններ և եկեղեցի առնչությունների պատմության ուսումնասիրությանը:

Աշխատանքում ֆնարկվում են հետևյալ հիմնական հարցերը՝ ԽՍՀՄ-ում սանձազերծված ֆաղափական բռնությունների տարիներին, եկեղեցի-իշխանություններ հարաբերությունները, հատկապես ԽՍՀՄ ներքին գործերի ժողովարհատի Միացյալ Պետական ֆաղվարչություն-եկեղեցի առնչությունները և օրենք-եկեղեցի հարաբերությունների հետ կապված հարցեր, եկեղեցու դրությունը տվյալ ժամանակաշրջանում, մասնավորապես հոգևորականության վիճակը 1937—38 թթ.:

Ատենախոսության մեջ փորձ է արվել հրապարակված և նորահայտ սկզբնաղբյուրների հիման վրա գնահատել 1920—1940 թթ. Հայաստանում եկեղեցու վիճակը, այդ տարիներին տեղի ունեցած ֆաղափական բռնությունների պատճառները և հետևանքները: Հատուկ ուշադրություն է դարձվել եկեղեցու և կրոնական աղանդների ներկայացուցիչների նրկատմամբ կիրառված բռնություններին, դրանց իրական չափերի նըշամանը, հատկապես, բռնադատված հոգևորական հայտնի գործիչների կյանքի լուսաբանությանը:

Աշխատանքի վերջում, որպես հավելված, ներկայացված են մի ֆանի կարևոր սկզբնաղբյուրներ, ինչպես 1930 թ. մարտին վերագրվող ԽՍՀՄ ՄՊՔՎ շըշաբերական նամակը «եկեղեցական շարժման վիճակի ու հեռանկարների և ՄՊՔՎ մարմինների հետագա խնդիրների մասին», ԽՍՀՄ Զինվորական դատախազության ֆննիչ Ս. Վիտիևսկու 1936 թ. հունվարի 7-ի տեղեկանքը «Հայաստանի Կ(Բ)Կ նախկին 1-ին ֆարուստ-ղար Սղասի Ղևոնդի Խանչյաֆի մահվան (նույն, 1936 թ.) պատճառների ստուգման արդյունքների մասին» և հինգ աղյուսակ՝ կազմված ՀՀ ԱԱՆ կարնված գործերի ֆոնդի տվյալների հիման վրա, որոնք վերաբերում են 1930-ական րվերին Հայաստանում, մասնավորապես, եկեղեցու ներկայացուցիչների նկատմամբ կիրառված բռնություններին:

Արդիականությունը և հրատապությունը. «խորհրդային իշխանությունը և եկեղեցին Հայաստանում 1920—1940 թթ.» ատենախոսություն

¹ ՀՀ ԱԱՆ-ը 1997 թ. միավորվել է ՀՀ ՆԳՆ-ի հետ և անվանվել ՀՀ ՆԳ և ԱԱՆ: Սեղմագրում օգտագործում ենք ԱԱՆ հաղավումը, քանի որ մեր ուսումնասիրած գործերի արխիվը մտնում է Ազգային անվտանգության համակարգի մեջ, իսկ Ներքին գործերի համակարգում ևս կա կարնված գործերի ֆոնդ:

նը, ինչպես նաև եկեղեցու և կրոնական այլ հոսանքների ամբողջական պատմության հետազոտությունը հայ պատմագրության համեմատաբար բույլ ուսումնասիրված հիմնախնդիրներից է: Սույն առեմախոսությունը միաժամանակ գալիս է լրացնելու Խորհրդային Հայաստանի պատմության «սպիտակ» էջեր:

Եկեղեցու պատմության նկատմամբ հետաքրքրությունը ուժեղացել է մասնավորապես Հայաստանում քրիստոնեությունը պետական կրոն հռչակելու 1700-ամյակի և քրիստոնեության շուրջ 2000-ամյա գոյատևման առիթով:

1920—1940 թթ. ԽՍՀՄ-ում, այդ թվում և Հայաստանում տեղի ունեցած հասարակական-քաղաքական իրադարձությունները բախտորոշ նշանակություն ունեցան նաև եկեղեցու համար: 1920 թ. Հայաստանում հաստատված խորհրդային իշխանությունը, առաջնորդվելով կոմունիստական կուսակցության հակաեկեղեցական-հակակրոնական քաղաքականությամբ, ժխտողական վերաբերմունք դրսևորեց դեպի եկեղեցին: Գլխավոր վարչական միջոցներով սոցիալիստականացնելու քաղաքականությունը, որն ուղեկցվեց համատարած կոլեկտիվացման շարժումով՝ քակվոր դրեց հոգևորականության զանգվածային ֆիզիկական հալածանքներին: Պա որակապես ազդեց Հայաստանում գործող կրոնական կազմակերպությունների գործունեության վրա, զրկեց նրանց ոչ միայն դեռևս պահպանված սեփականության մեծ մասից, այլև, զգալիորեն նվազեցրեց նրա ամենաակտիվ մասը կազմող քահանաների թիվը: Որոշ, կարևոր ընդմիջումից հետո, իշխանությունների կողմից կիրառված 1937—1938 թթ. քաղաքական բռնություններն ուղղվեցին նաև հոգևորականության բարձրաստիճան ներկայացուցիչների դեմ:

Այդ տարիներին ֆիզիկապես ոչնչացվեց հոգևորականության զգալի մասը: Փաստորեն, 1930-ական թվերը դարձան Հայաստանի հոգևորականների ու կրոնական աղանդների ներկայացուցիչների հալածման ամենածանր ժամանակաշրջանը: 1938 թվականին դրված էր անգամ Հայ առաքելական եկեղեցու լինել՝ չլինելու հարցը և միայն 2-րդ աշխարհամարտին նախորդած աշխարհափառական նոր իրադրությունը փոխեց իրավիճակը և Հայաստանում, ըստ էության, մնացած միակ եկեղեցին փրկվեց կործանումից:

Եկեղեցու և կրոնական աղանդների 1920—40 թթ. ամբողջական գործունեությունը Հայաստանում առ այսօր պատմագիտության հատուկ ուսումնասիրության նյութ չի հանդիսացել: Հետազոտության փորձ է

կատարվել միայն հայ առաքելական եկեղեցու 1920—50-ական թվերի պատմության շրջանը, սակայն, այս դեպքում ամբողջական չեն ներկայացված 1930—40 թվերի իրադարձությունները: Հատկապես ոչ լրիվ են ուսումնասիրված այդ ժամանակաշրջանում հոգևորականների նկատմամբ կիրառված բռնությունները, դրանց պատճառներն ու հետևանքները: Հայաստանում գործող կրոնական հոսանքների պատմությանը վերաբերող խորհրդային շրջանի գրականությունում, հասկանալի պատճառներով, միակողմանի են լուսարանվում այդ ժամանակաշրջանի իրադարձությունները և, ըստ էության, այն ուսումնասիրված չէ: Պատմագրության մեջ հատկապես բաց է մնացել Հայաստանում գործող հայ կարոլիկների, հայ ավետարանականների, ինչպես նաև տարբեր կրոնական աղանդների ուսումնասիրությունը, որը հնարավորություն կընձեռնէր առավել հստակ և ամբողջական պատկերացումներ կազմելու հանրապետությունում եկեղեցու և կրոնական աղանդների գործունեության մասին:

Կեր ժամանակների համար կարևոր է նաև իշխանություններ-եկեղեցի փոխհարաբերությունների ուսումնասիրությունը, օրենք-եկեղեցի հարաբերությունների հարցը: Առանձնապես մեծ նշանակություն է ձեռք բերել եկեղեցու հետ իշխանության տարբեր մարմինների, այդ թվում, հատուկ ծառայությունների առնչությունների խնդիրը:

Կառչին անգամ հրապարակել են և վերլուծել այդ հարցի լուսաբանման համար կարևոր նշանակություն ունեցող ԽՍՀՄ ՄՊՔՎ «Եկեղեցական շարժման վիճակը և հեռանկարների ու ՄՊՔՎ մարմինների հետազոտ խնդիրների մասին» 1930 թ. մարտի 22-ի շրջաբերական նամակը: Դա, ըստ էության, իշխանությունների գործունեության ծրագիրն էր դեպի եկեղեցին ամբողջ 30-ական թվականների համար:

Կառնախոսության մեջ փորձել են և անկողմնակալ մոտեցում ցուցաբերել սկզբնաղբյուրների հաղորդած տեղեկություններին և 1920—1940 թթ. Հայաստանում եկեղեցու և իշխանությունների գործունեությունը դիտել ժամանակի իրողությունների և երկրի ներքին ու արտաքին հարաբերությունների ընդհանուր պատկերի վրա: Առանձնապես կարևոր են համարում ՀՀ ԱՄՆ արխիվի նյութերի անաչառ մեկնաբանումը, այլապես կարելի էր ընկնել ծայրահեղ, կոնկրետ պատմական ժամանակաշրջանը միակողմանի ներկայացնելու վտանգի մեջ: Այդ առումով անհրաժեշտ է Հայաստանում եկեղեցու նկատմամբ կիրառված քաղաքականությունը ներկայացնել որպես, Միությունական պետության

ընդհանուր ֆազականության մաս, առանձնացնելով հանրապետության յուրահատկությունները: Դրանք արտահայտվում են Հայաստանի իշխանությունների կողմից հայ առաքելական եկեղեցու նկատմամբ առանձնահատուկ վերաբերմունքով՝ ի տարբերություն մյուս կրոնական ուղղությունների:

Ուշադրություն ենք նվիրել Հայաստանյան եկեղեցու որոշ ներկայացուցիչների մասնակցությամբ տվյալ ժամանակաշրջանում իշխանությունների դեմ բնականորեն առաջացած ընդդիմադիր շարժմանը: Ներկա ուսումնասիրության մեջ փորձ է արված նոր տեսակետով հետազոտել այդ բնովգումների պատմությունը: Նոր մոտեցում է ցուցաբերված նաև ՆԳՄԿ ՄԳՔՎ-եկեղեցի հարաբերությունների, ՄԳՔՎ-ի, որպես բռնություններ իրագործող մարմնի և դրան անընդունի շարք խնդիրների, ինչպես նաև, կրոնի նկատմամբ խորհրդային իշխանությունների բացասական դիրքորոշման պատճառների մի փանի հարցերին:

Պատմագրությունը և աղբյուրների տեսությունը. Մեր հիմնահարցի լուսաբանման վերաբերյալ ըստ էության գրականությունը չկա: Բացառություն են կազմում վերջերս հրապարակված Ս. Ստեփանյանցի «Հայ առաքելական եկեղեցին սաալինյան բռնապետության օրոք» Ապոլոն, Եր. 1994 թ. գիրքը և նույն հեղինակի «Հայ առաքելական եկեղեցին 1920—1950-ական րվականներին» քեկնածուական առեանխոսությունը: Դրանք ընդգրկում են Հայաստանում գործող, հիշտ է հիմնական, սակայն միայն մեկ եկեղեցում առնչվող հարցերը, և որոնցում անհրաժեշտ խորությամբ չեն արված հատկապես 1930—40 թթ. իրադարձությունները: Ընդ որում, նկատելի է հեղինակի ընդգծված, միակողմանի մոտեցումը լուսաբանվող խնդրին, որը հանգեցրել է որոշ, մեր կարծիքով, ոչ համոզեցուցիչ հետևությունների ու եզրահանգումների:

Մասնավորապես, ընդգծված է եկեղեցու նկատմամբ ուսումնասիրվող ժամանակաշրջանում խորհրդային իշխանությունների նկատմամբ հեղինակի միակողմանի՝ միայն բացասական ներկայացնելու միտումը, որի հետևանքով հայտնի փաստերի կողքին հանդիպում ենք չհիմնավորված եզրակացությունների, ինչպես որոշ հոգեւորականների մահը (Խորեն Ա կաթողիկոս, Գյուտ Եպիսկոպոս, Կարապետ վարդապետ) որպես իշխանությունների կողմից կատարված, ապացուցված սպանություններ կայացնելը, ինչպես նաև ՀԽՍՀ ղեկավարներին որպես միայն շարագործներ ներկայացնելու միտումը — (Ս. Խանչյան, Ս. Տեր-Գաբ-

րիելյան, Գ. Հարությունյան և այլն): Կամ առեանխոսության մեջ տրվում են եզրակացություններ, որոնք ըստ էության չեն բխում նյութի շարադրանքից: Այս և այլ դիտողություններով հանդերձ հիշատակված աշխատություններն առաջին ֆայլն են այդ բարդ խնդրի ուսումնասիրության ուղղությամբ, պարունակում են հարուստ փաստական տվյալներ, որն արժանի է ուշադրության:

Առավել շատ է ուսումնասիրված ժամանակաշրջանին վերաբերվող գրականությունը, որը օգնում է համակողմանիորեն ծանոթանալու տրվյալ տարիների պատմական իրադարձություններին: Այսպես, «Հայ ժողովրդի պատմություն» բազմահատորյալի 7-րդ հատորը, «Հայաստանի կոմկուսի պատմության ուրվագծերը», «Հայոց պատմություն» դասագիրքը 7—8-րդ դասարանի համար (Եր. 1994 թ. և 1996 թ.), «Հայոց պատմություն» ձեռնարկը 9-րդ դասարանի համար (Եր. 1993 թ.), որոնցում ժամանակակից գիտական գնահատականների առաջին փորձն է արված ուսումնասիրվող ժամանակաշրջանի մասին, ինչպես նաև Վ. Դազախեցյանի «Հայաստանի կոլտնեսային գյուղացիության պատմությունը 1929—1937 թթ», Հ. Կարապետյանի «Սովետական բանվոր դասակարգի ձևավորումը և զարգացումը», Գ. Գեղամյանի «Սոցիալ-տրեսական փոփոխությունները Հայաստանում ՆեՊ-ի տարիներին», Կ. Խուրադեղյանի «Խուլտո»ական հեղափոխությունը Խորհրդային Հայաստանում» ու նրա խմբագրությամբ հրատարակված «Խորհրդային Հայաստանի բանվոր դասակարգը զարգացած սոցիալիզմի ժամանակ» և այլն:

Հակակրոնական ընդգծված ուղղվածություն ունեն Վ. Պարսամյանի «Էջմիածինը հակահեղափոխության սպասարկու», «Էջմիածինը ու դաշնակցությունը» գրքերը, ինչպես նաև Գ. Մեծբունու քեկնածուական քեզր «Կրոնական գաղափարախոսության դեմ պայքարը և ժողովրդական զանգվածների աքեխտական դաստիարակությունը Հայաստանում 1920—30-ական րվականներին» ու նույնպիսի կառուցվածքով ու բովանդակությամբ Հ. Քրոյանի քեկնածուական առեանխոսությունը:

Ուշադրության արժանի են Խ. Մոմչյանի «Կոմունիզմը և քրիստոնեությունը», «Կրոնը և ժամանակի գաղափարախոսական պայքարը», «Հայ եկեղեցու արդի գաղափարախոսությունը», Բ. Իսայանի «Աքեիզմի հիմունքները» և Գասպարյանի «Գիտության և կրոնի հակադրությունը» գրքերը:

Մանրագել ենք նաև հակակրոնական բնույթի «Հակակրոնական

աշխատանքը դարձրեցին», «Հակակրոնական ժողովածու», «Կոմունիստական պարտիան և սովետական կառավարությունը կրոնի և եկեղեցու մասին» և այլ նման աշխատությունների հետ, ինչպես նաև օգտագործել են Կ. Մարսի, Վ. Լենինի և սոցիալ-դեմոկրատական գաղափարախոսության այլ աշխարհային ընկած գործիչների (Կաուցկի, Ռեման և այլն) աշխատությունները, որոնցում նրանք անդրադարձել են կրոնական խնդիրներին:

Հայաստանում գործող եկեղեցիների պատմությանը վերաբերող խորհրդային ժամանակաշրջանի գրականության մեջ հասկանալիորեն միակողմանի լուսարանման և, ըստ էության, այլ գրականության բացակայության պատճառով՝ առաջին անգամ ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել են 22 ազգային անվտանգության նախարարության արխիվում պահպանված, այդ տարիներին եկեղեցիների գործունեությանը առնչվող բոլոր փաստաթղթերը, (ՀՀ ԱՄՆ արխիվ, ԿԴՖ, պատմ. ֆոնդ), ինչպես նաև ՀՀ հասարակական-քաղաքական կազմակերպությունների փաստաթղթերի կենտրոնական պետական արխիվի (ՀՀՔԿՓԿՊՍ ֆ. 1, ֆ. 5, ֆ. 6), ՀՀ պատմության կենտրոնական պետական արխիվի (ՀՀՊԿՊՍ ֆ. 409), ՀՀ նորագույն պատմության կենտրոնական պետական արխիվի (ՀՀ ՆՊԿՊՍ ֆ. 113), Մայր Աթոռ Պետրոսի (ՄԱԴ-ի փաստաթղթերը ՀՀ ԱՄՆ-ից էլմիաձին փոխանցված փաստաթղթերն են, որոնք այնուհետև տեղափոխվել են ՀՀ ՊԿՊՍ, սակայն առայժմ համարադրված չեն, ուստի ուսումնասիրության մեջ օգտագործվում են ՄԱԴ-ում գրանցված համառոտումները), համապատասխան վավերագրերը: Օգտագործվել են նաև մեր ուսումնասիրության համար ազդեցություն ունեցող խիստ արժեքավոր Ս. Բենբուդյանի կազմած «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության (1921—1938) եր. 1994 թ. և «Վավերագրեր Հայ եկեղեցու պատմության» գ. Բ, եր. 1996 թ. փաստաթղթերի ժողովածուներն ու «ՍՄԿԿ-ն բանաձևերում ու որոշումներում», 2-րդ մաս, եր. 1955 թ. ժողովածուները:

Համակողմանի օգտվել են և ՀԽՍՀ-ի և ՀԽՍՀ-ի այդ տարիներին հրապարակված մամուլից, մասնավորապես «Պրավդա», «Խորհրդային Հայաստան», «Կոմունիստ», «Սնաստված», «Բեքործնիկ» և այլ հրապարակումներից, ինչպես նաև արտասահմանում լույս տեսնող «ՎԷՄ» ամսագրից:

Ուսումնասիրության նպատակը և խնդիրները. ուսումնասիրության նպատակն է ի մի բերել 1920—1940 թթ. Հայաստանում գործող եկեղեցիների և կրոնական աղանդների պատմությանն առնչվող նյութերը, Հայաստանի տարբեր արխիվների և հատկապես ՀՀ ԱՄՆ արխիվի նորահայտ սկզբնաղբյուրների տվյալները: Պատմական նյութերի ու հետազոտությունների հիման վրա ամբողջացնել 1920—1940 թթ. Հայաստանի հոգևորականության նկատմամբ իշխանությունների վարած քաղաքականության պատկերը: Ներկայացնել այդ ժամանակաշրջանում բռնությունների ենթարկված կրոնական գործիչներին:

Ստեղծագործության հիմնական նպատակներից է՝ ներկայացնել ԽՍՀՄ-ում 1930-ական թվականներին՝ քաղաքական հալածանքների վերելի շրջանում, եկեղեցու վիճակը Հայաստանում, գիտական շրջանառության մեջ դնել այդ խնդիրն առնչվող ՀՀ ԱՄՆ-ում պահպանվող փաստաթղթերը:

Հենվելով արխիվային վավերագրերի և դրանց վերլուծության, պարբերական մամուլի և պատմագիտական նյութերի վրա, խնդիր են դրել ցույց տալ 1920—1940 թթ. խորհրդային իշխանությունների վարած շարունակաբար սաստկացող հակակրոնական քաղաքականության պատկերը:

Հիմնվադրել, որ Հայաստանում, ինչպես ողջ ԽՍՀՄ-ում, իշխանությունների կողմից տարվել է համընդհանուր հակաեկեղեցական գիծ, որի նպատակն էր քուլացնել եկեղեցիները և, հնարավորության դեպքում, վերացնել դրանք:

Ներկայացնել ՀԽՍՀ իշխանություններ-եկեղեցի փոխհարաբերությունների զարգացումը և դրանց արդյունքները 1930-ական թվերի ավարտին, լուսարանել այդ տարիներին Հայաստանում գործող եկեղեցիների և կրոնական տարբեր ուղղությունների աղանդների կրած նյութական և այլ վնասների հարցերը:

Ուսումնասիրության կարևոր խնդիրներից է Հայաստանի եկեղեցիների ու կրոնական աղանդների ստալինյան բռնություններին զոհ դարձած ներկայացուցիչների գործունեության ամբողջական լուսարանումը:

Կարևորել են 1937—38 թթ. համընդհանուր քաղաքական բռնաճնշումների ժամանակ եկեղեցու նկատմամբ կիրառված խիստ հալածանքների պատճառների ու հետևանքների վերլուծության խնդիրը՝ հաշվի առնելով եկեղեցու գործունեության հիմնական բնույթն ու առանձնահատկությունները:

Խնդիր է դրվել առավել բնագրական ներկայացնել ԽՍՀՄ-ում, մասնավորապես, Հայաստանում զործող եկեղեցիների ու կրոնական աղանդների նկատմամբ իշխանությունների կողմից տարված ֆաղափականությունը, առանձնացնելով հանրապետության ղեկավարության յուրովի վերաբերմունքը դեպի Հայաստանի ամենատարածված ու հեղինակավոր Հայ առաքելական եկեղեցին:

Ուսումնասիրության գիտական նորույթը և դործնական նշանակությունը. Վերը քվարկված խնդիրների և հարցերի փնտրությամբ է պայմանավորված ներկա աշխատանքի նորամուծությունը:

ա) Փորձ է արված նոր դիրքերից ներկայացնել Հայաստանի իշխանություններ և եկեղեցի փոխհարաբերությունները:

բ) Պատմագիտության մեջ առաջին անգամ տարբեր սկզբնաղբյուրների, պատմական նյութերի և հետազոտությունների ու պարբերական մամուլի հիման վրա ամբողջացվել է 1920—1940 թթ. Հայաստանում զործող եկեղեցիների և կրոնական աղանդների պատմությունը:

գ) Առաջին անգամ ուսումնասիրվել է և ներկայացվել Հայաստանում համատարած կոլեկտիվացման տարիներին և 1937—38 թթ. ֆաղափական բռնություններին զոհ գնացած հոգևորականներին, որպես նիմանական սկզբնաղբյուր վերցնելով ՀՀ ԱՍՆ արխիվի տվյալները: Ճշգրտվել է նրանց բիվը, ըստ շրջանների և ներկայացված մեղադրանքների:

դ) Առաջին անգամ ներկայացվել է ՆԳժԿ ՄՊՔՎ և եկեղեցի ադրնչությունները, փորձ է արվել ամբողջացնել այդ հարաբերությունների ձևավորման ընթացքն ու հետևանքները:

ե) Նորովի է արվել եկեղեցու նկատմամբ խիստ հալածանքների պատճառների ու հետևանքների վերլուծությունն ու մեկնաբանությունը, փնտրվել օրենք-եկեղեցի հարաբերության խնդիրները:

Աշխատության ուսումնասիրության արդյունքները կարելի է օգտագործել Հայաստանի նորագույն շրջանի պատմության, Հայաստանի եկեղեցիների և կրոնական աղանդների, համատարած կոլեկտիվացման, ստալինյան բռնությունների, հատուկ ծառայությունների պատմության, դպրոցական և բուհական դասագրքերի շարադրման համար, ինչպես նաև հայ իրավունքի պատմությամբ նվիրված ուսումնասիրություններում և առանձին մենագրություններում:

Հետազոտության մեթոդիկան. Ներկայացվող առեմախոսությունը հիմնվում է հայ և օտար սկզբնաղբյուրների, պատմական ուսումնասիրությունների, պարբերական մամուլի նյութերի համակարգված փնտրության և վերլուծության վրա:

Աշխատանքը գրված է մենագրության ձևով և գերծ է ֆաղափական կաղապարի ազդեցությունից:

Ուսումնասիրության փորձաքննությունը. Առեմախոսությունը փնտրվել և երաշխավորվել է պաշտպանության ՀՀ ԳԱՍ պատմության ինստիտուտի խորհրդային Հայաստանի պատմության բաժնում: Առեմախոսության հիմնական դրույթները հրապարակված են հեղինակի հինգ հոդվածներում:

Առեմախոսության կառուցվածքը և բովանդակությունը. Առեմախոսությունը բաղկացած է ներածությունից, չորս գլուխներից, վերջաբանից, օգտագործված սկզբնաղբյուրների ու գրականության ցանկից և հավելվածից:

Ներածության մեջ հիմնավորված է ուսումնասիրվող բեմայի գիտական արդիականությունը, աշխատանքի և բարձրացված հարցերի կարևորությունն ու բնագիտական բնութագիրը: Ներածության մեջ հնարավորին սեղմությամբ ներկայացված է սկզբնաղբյուրների և գրականության տեսությունը:

Գլուխ առաջին.— «Կրոնական կազմակերպությունները 1920-ական քվականներին»:

Այս գլխում ներկայացված է 1920-ական քվերին եկեղեցու վիճակը Հայաստանում: Տրված է ԽՍՀՄ-ի պետական վերաբերմունքը դեպի եկեղեցին ու կրոնը և դրա դրսևորումները Հայաստանում: Համառոտակի կանգ ենք առել 20-ական քվերին իշխանությունների կողմից բնորոշված այն օրենքների վրա, որոնք վերաբերվում էին եկեղեցուն և վերլուծել դրանց կոնկրետ հետևանքները Հայաստանում: Այնուհետև փորձել ենք հշգրտել իշխանություններ, հատկապես ՆԳժԿ ՄՊՔՎ և եկեղեցի հարաբերությունների զարգացումը և վիճակը 20-ական քվերին, հաշվի առնելով այն հանգամանքը, որ տակավին 1922 թ. սեպտեմբերի 26-ին հրապարակվել էր ՀԽՍՀ ԿԳԿ-ի դեկրետը՝ ՆԳժԿ-ին և Արդարադատության Ժողովատնին հանձնարարելով զբաղվելու կրոնական համայնքների կազմակերպման և տուժաբույան հարցերով: Դրանով, արտա-

նապես օրինական տեսք էին ստացել ՄՊԲԿ-ի աշխատանքները կրօնական միջավայրում: Ռուսաստանում եկեղեցու նկատմամբ կիրառվող անհնաշտ հալածանքների պատկերի վրա փորձել են համեմատական վերլուծության ենթարկել ԽՍՀՄ-ի և Հայաստանի իշխանությունների վերաբերմանը՝ որոշակի տարբերությունը դեպի կրոնն ու եկեղեցին, հատկապես դեպի Հայ առաքելական եկեղեցին:

Նշված առիթներին, բնականաբար, Հայաստանում ևս փակվում էին եկեղեցիները, կողոպտվում էր նրանց գույքը և այլն, սակայն բացակայում էր հոգևորական գործիչների ֆիզիկական հալածանք:

Ի մի ենթ քերել նախակոլտնետային գյուղում գործող եկեղեցիների, այն է՝ Հայ առաքելական, Հայ կաթոլիկ, Հայ ավետարանական, Ռուս ուղղափառ, ինչպես նաև կրոնական աղանդների՝ «7-րդ օրվա աղվեսախմբի», «սուրբառիկների», «մուրկանների», «պրիգուների» և ուրիշների մասին արժիվներում պահպանվող նյութերը: Տրված են այդ տարիներին համեմատաբար ակտիվ գործող «Մարտնչող անասավածների» կազմակերպության և «նորարարների» կամ «կենդանի եկեղեցու» շարժումների առաջացման և վիճակի մասին բնորոշացումներ: 1925 թ. «Բեգրոմների» քերքի ակտիվի ստեղծած «Մարտնչող անասավածների միությունը» իր գրեթե ունեցած և Հայաստանում, որում, ըստ պաշտոնական տվյալների, 1930 թվականի առաջին կեսին բնոգրված էին 43 հազար մարդ:

1922 թ. Ռուսաստանում ուղղափառ եկեղեցու ներսում առաջ էր եկել «նորարարների» շարժումը, որը հասկանալի պատճառներով, իր առաջնաշարությունը գաղվ նաև Հայաստանում: Այստեղ այն կրում էր, «Ազատ եկեղեցական եղբայրություն» անունը: Այդ եղբայրությունը, որը ղեկավարում էին Աշոտ Եսիսկյանը, Բենիկ վարդապետը, Բանաններ Մեխակ Մելյանը, Տեր-Հարությունյանը, Տեր-Խոյեցյանը և ուրիշներ, նպատակ էր հայտարարել Հայ լուսավորչական եկեղեցին մոտեցնել առաքելական դարերի պարզությանը, մաքրել Բիստոնյա եկեղեցին օտարամուտ սովորություններից, մացնել կենդանի ժողովրդի լեզուն և այլն:

Ձևայած վերոնիշյալ կազմակերպությունների գործունեությանը, ինչպես վկայում են ուսումնասիրված նյութերը, եկեղեցիները Հայաստանում և հատկապես Հայ առաքելական եկեղեցին մինչև 1930-ական թվականների սկիզբը մեծ տարածում և հեղինակություն ունեին:

Առանձնացնելով այն հարցը, որ ի տարբերություն կենտրոնի, Հայաստանի իշխանությունները 20-ական թվերին համեմատաբար մեղմ

վերաբերմունք էին ցուցաբերում հատկապես դեպի Հայ առաքելական եկեղեցին՝ փորձել են ներկայացնել դրա պատճառները:

1-ին՝ դարեր շարունակ պետականությունից գոյված հայ ժողովրդի կյանքի կարգավորողի դերը մեծ հեղինակություն էր ստեղծել Հայոց եկեղեցու համար: 2-րդ՝ հայերը ունեին բավականին տարածված գաղթավայրեր, ապա սփյուռք, որտեղ անշափ կարևորվել էր եկեղեցու դերը, ինչը չէր կարող իր ազդեցությունը չունենալ հանրապետության իշխանությունների վրա: 3-րդ՝ չնայած հալածանքներին, հայ առաքելական եկեղեցին զգալի ազդեցություն ուներ հանրապետությունում: Այս խնդրում կարևորվում է անշուշտ Հայաստանի ղեկավարության դերը (հատկապես ՀԿ(Բ)Կ Կենտկոմի Բարսեղյան, Էջմիածնի նեմարանում ուսանած Ա. Խանջյանի), որը ևս երբեմն-երբեմն բնդառաշում էր Հայոց եկեղեցու հարցերի լուծմանը: Այստեղ կարևորվում է, անշուշտ, նաև Հայոց եկեղեցու ղեկավարների, կաթողիկոս Գևորգ Ե-ի և առանձնապես նրա տեղակալ Խորեն արքեպիսկոպոս Մուսակյանի դերը, նրանց հեղինակությունն ու խելացի հաղափականությունը:

Ատենախոսության առաջին գլխում արված է համառարած կոչել-տիվացման շարժման սկզբին Հայաստանում գործող եկեղեցիների վիճակի նկարագրությունը: Պատահական չէր, որ 1929 թ. մարտի 14-ին ՀԿ(Բ)Կ ԿԿ «Հակահեղինակական աշխատանքի ուժեղացման մասին» համակ է ուղարկել բոլոր շրջաններին, ԿԿՄ Կենտկոմին և այլ գերատեսչությունների ու կազմակերպությունների, որտեղ այլ խնդիրների նեմ նշվում է, որ հոգևորականությունը մեծ հեղինակություն է վայելում և, որ «Անասավածների» միությունը բույլ ուշադրության է արժանանում:

Դուխ երկրորդ. — «Եկեղեցին գյուղատնտեսության կոլեկտիվացման պայմաններում»

ԽՍՀՄ-ում բնակվող ժողովուրդների կյանքում առանձնահատուկ նշանակություն և հետևանքներ է ունեցել 1929 թ. սկսված և 1930-ական թվերի սկզբներին մեծ ծավալ բնդունած գյուղատնտեսության կոլեկտիվացման շարժումը, որը վարչական հանապարհով գյուղի սոցիալիստականացման փորձ էր:

Նշված ժամանակահատվածում ավարտվում է մենատիրական համակարգի ձեավորումը ԽՍՀՄ-ում, որպիսի պայմաններում առավել սրվեցին պետություն-եկեղեցի հարաբերությունները:

Գյուղերում, իրապես կուլակներից կամ աղյպիսի հայտարարվածներից առգրավում էին հողը, կայր, տունը, իսկ նրանց՝ բնտանիքները:

րով ամառում: Հասկանալի է, որ հակակրոնական գաղափարախոսությամբ առաջնորդվող խորհրդային իշխանությունները չէին կարող շօթազործել հարմար պահը և կուլակաքափման կամպանիայի ժամանակ հաշվենարդար շտեմնել գյուղական հոգևորականների նկատմամբ:

1930-ական քվականներին իշխանություն և եկեղեցի հարաբերությունները ուսումնասիրելու համար առանցֆային նշանակություն ունի 1930 թ. մարտի 22-ին ԽՍՀՄ ՄՊՔՎ-ի «եկեղեցական շարժման վիճակի և հեռանկարների ու ՄՊՔՎ մարմինների հետագա խնդիրների մասին» շրջաբերական նամակը:

Առաջին անգամ հրապարակվող այդ փաստաթղթում ես հաստատվում է այն իրողությունը, որ կրոնական նախապաշարմունքները լայն տարածում ունեին ԽՍՀՄ-ի, հատկապես, գյուղական բնակչության մեջ, ուստի խորհուրդ էր տրվում այդ իրավապահպան մարմնի տեղական ստորաբաժանումներին՝ եկեղեցու դեմ գործողություններում շեշտը չդրանել վարչական-օպերատիվ միջոցների վրա, առաջարկվում էր եկեղեցին ֆայֆայել նեխից, որի համար օգտագործել նորարարների շարժումը: Ընդ որում, իշխանությունները տարբերակում չէին դնում եկեղեցիների ու կրոնական ուղղությունների մեջ: Առանձնապես խրախուսվում էր անեկանելի վիճակի հասցված հոգևորականների հրապարակային հրաժարումը իրենց կոչումից:

Հայաստանում ես կուլակաքափման կամպանիան օգտագործվեց գյուղական վայրերի հոգևորականներին հալածելու ուղղությամբ: Բնակավայրում, կոլեկտիվացման շարժումը դիմադրության էր հանդիպում: Այսպես, միայն 1930 թ. փետրվար-մարտ ամիսներին 24 այդպիսի ելույթներ գրանցվեցին Հայաստանում, որոնց մասնակիցների մեջ էին նաև մի շարք հոգևորականներ:

Եկեղեցու համար այդ նակատագրական տարիներին՝ 1930 թ., վախճանվում է Գևորգ—Ն կաթողիկոսը և երկու տարվա բանակցություններից հետո՝ իշխանությունները բույլ են տալիս Հայ առաքելական եկեղեցու նոր ղեկավարի ընտրությունները: Այստեղ կարևորվում է Հայաստանի ղեկավարների, մասնավորապես, ՀԿ(Բ)Կ ԿԿ առաջին ֆառառար Ս. Խանջյանի դիրքորոշումը, որն անձամբ գեկուցագիր է ուղարկում ՀամԿ(Բ)Կ ԿԿ և Անդրերկրում՝ պատնասաբանելով նոր կաթողիկոսի ընտրություններն անցկացնելու անհրաժեշտությունը:

Այդ առումով, նկատելի է նաև Հայաստանի իշխանությունների որոշակի տանելի վերաբերմունքը դեպի Հայ առաքելական եկեղեցին: Դա

արտահայտվում էր նրանում, որ երբեմն ընդառաջում էին կաթողիկոսի խնդրանքներին, ըստ էության, գրեթե աչք էին փակում այն իրողության դեմ, որ էշմիաժինը հետևողականություն չէր ցուցաբերում Ատրպատականի կրոնական առաջնորդ Ներսես արքեպիսկոպոս Մելիք-Փանգյանին քեմի առաջնորդությունից հանելու իշխանությունների պահանջը կատարելու մեջ:

Կոլեկտիվացման շարժման առաջին տարիներին, մասնավորապես, 1930 թվին Հայաստանում բռնադատվում են 1802 մարդ: Նրանցից հոգևորական էր 39-ը, այդ թվում 38-ը ներկայացնում էին հայ առաքելական և 1-ը՝ հայ կաթոլիկ եկեղեցին:

Համընդհանուր հալածանքներ և ՄՊՔՎ-ի շրջաբերական նամակով այդ մարմիններին տրված հրանանգների իրագործումը իր «արդյուններն» էր տալիս և Հայաստանում, որի վկայությունն է 1930 թ. հունվարին մի շարք հոգևորականների հրաժարումը իրենց կոչումից: Այսպես, օրինակ, Քարվանսարայի ֆահանաների հրաժարման մասին էր հայտարարվում «Խորհրդային Հայաստան» պաշտոնաթերթում, որտեղ նշվում էր, որ նրանք «անվերադարձ հրաժարվում են սև գործից» և անարգանքի սյունին զամում բոլոր «վեղարավորներին ու կղերականներին»:

Գյուղական շրջանների հոգևորականները, մասնավորապես ֆահանաները ենթարկվում էին հալածանքների, օրեցօր ծանրանում էր նրանց վիճակը և բոլոր կրոնական քեմերից հուսահատական նամակներ էին ուղարկվում էշմիաժին:

Հալածանքներին զուգահեռ, այդ տարիներին ես շարունակվում էր եկեղեցիների փակումը: Այսպես 1930—36 թթ. լուծարվում է Սևանի վանքը, կողոպտվում են Հառիճի և Սանահինի վանքերը, բռնագրավվում է Դարալագյազի Խաչիկ գյուղի եկեղեցին, Լենինականի եկեղեցիները և այլն:

Նշված տարիներին բռնադատված հոգևորականները ներկայացնում էին Հայաստանում գործող բոլոր եկեղեցիները և կրոնական աղանդները, այդ թվում և ուսումնական եկեղեցին ու մոլոկանների աղանդը:

Մեր կողմից կատարված ուսումնասիրությունների արդյունքում պարզվել է, որ 1930—1936 թթ. Հայաստանում բռնարարներ են կատարվել 117 հոգևորականների նկատմամբ, որոնցից 112-ը հայ առաքելական, 4-ը հայ կաթոլիկ և 1 հայ ավետարանական եկեղեցու ներկայացուցիչներ էին հանրապետության 27 շրջաններից: Ընդ որում, բըն-

նադատվել են էջմիածնում 17, Մարտունիում 16, Լենինականում 10, Ախալքալաքում 10, Աշտարակում 7, Կոտայքում և Երևանում 6-ական հոգևորականներ և այլն:

Բնականաբար, առավել դաժան հարվածները իջնում էին համատարած կոլեկտիվացման կամպանիայի մեջ ընդգրկված շրջանների հոգևորականների վրա: Ուշագրավ է, որ տվյալ ժամանակահատվածում դատապարտման ամենատարածված չափը 3 կամ 5 տարի ախտորոշում կամ ազատազրկումն էր: Գնդակահարվել են երեք, 10 տարով ազատազրկվել տաս, 8 տարով՝ երկու, 7 տարով՝ մեկ, 4 տարով՝ երկու և 2 տարով՝ տասնվեց հոգևորականներ և այլն:

Այդ տարիներին ձերբակալված հոգևորականներին հիմնականում մեղադրում էին դաշնակցական գործունեության, հակահեղափոխական, հակախորհրդային աշխատանքի տանելու մեջ:

Ուսումնասիրության արդյունքում արվել է հետևյալ եզրահանգումը, որ, եթե 20-ական թվերին առավել տարածված էր եկեղեցիների փակումը, նրանց գույքի բռնագրավումը, ապա 30-ական թվերի առաջին կեսում, դրան գուցա ևս, ընթացում էր զանգվածային հալածանքները հոգևորականների անձի և նրանց ընտանիքի անդամների նկատմամբ:

Դիտվա երրորդ.— «Հոգևորականությունը փաղափակյալ բռնանշումների սաստկացման տարիներին (1937—1938 թթ.)»:

Խորհրդային երկրի ժողովուրդների պատմության մեջ առանձնահատուկ կարևորություն ունի 1937—38 թթ. ուսումնասիրությունը, երբ մենատիրական համակարգի ամրապնդման պայմաններում ծավալվեց զանգվածային փաղափակյալ տեղադրում: Այն խլեց բազմաթիվ կյանքեր, խեղեց միլիոնավոր մարդկանց նախադասներ, իր բացասական խորք հետքը բողեց ԽՍՀՄ-ի ժողովուրդների հետագա զարգացման ընթացքի վրա: Հայաստանը ևս չխուսափեց այդ համընդհանուր փաղափակյալ բռնություններից:

1936 թվականի գարնանը հայտնի մտավորական Ներսիկ Ստեփանյանի «տրոցկիստական խմբի» ձերբակալմամբ և նույն թվի հուլիսի 9-ին Քրիլիսիում պաշտոնապես «ինքնասպանություն» հայտարարված Ա. Խանջյանի մահվանից հետո՝ Հայաստանում ևս սկիզբ առնեց զանգվածային փաղափակյալ բռնանշումները, որին զոհ գնաց, ըստ ՀՀ ՍՍՆ

արխիվի գործերի հիման վրա կատարված մեծ հաշվարկների՝ 14904 մարդ: Այս անգամ բռնությունների ալիքն իր մեջ առավ Հայաստանի մտավորական, հասարակական-փաղափակյալ գործիչներին ու բնականաբար հոգևորականության առավել աչքի ընկնող ներկայացուցիչներին:

Միայն 1937 թ. օգոստոսի 11-ից մինչև սեպտեմբերի 18-ը Հայաստանի ՆԳՖԿ Նոյակի բնակիչ է 354 մարդու գործ, որոնցից մահվան են դատապարտվել 304-ը, իսկ մյուսները՝ տարբեր ժամկետների ազատազրկման:

Բնականաբար, այդ բռնությունները չէին կարող չբնանշել հոգևորականությանը և կրոնական աղանդների ներկայացուցիչներին:

Առանձնապես զգալի հարված ստացավ Հայաստանում ամենատարածված Հայ առաքելական եկեղեցին: Արդեն իսկ լուրջ հալածանքների ենթարկված այդ եկեղեցին նշված տարիներին կարցեց իր սպասավորներից 89-ին, որոնցից 82-ը գնդակահարվեցին:

Նկատելի էր, որ բռնությունների զոհերի մեջ, ի տարբերություն նախորդ տարիների՝ ավելանում էր բարձրաստիճանի հոգևորականների, եպիսկոպոսների ու վարդապետների թիվը:

Բռնադատված հոգևորականներից էին ժամանակի նախնական դեմքեր հագրատ առևտրականության վարդապետներ, առևտրականներ Թադևոս Հարությունյանը, Արտակ Սմբաթյանը, որոնք գնդակահարվեցին ՆԳՖԿ Նոյակի որոշմամբ, իսկ 10 տարվա ազատազրկում ստացած Բաղդակ եպիսկոպոս Միքայելյանը իր մահկանացուն կնքեց ախտաբանական: Նույն ոչ զտական մարմնի՝ Նոյակի որոշմամբ գնդակահարվեցին վարդապետներ Դանիել Զադոյանը, Տիրայր Դալալյանը և ուրիշներ:

Համընդհանուր բռնությունների տարիներին, ինչպես վկայում են փաստերը, համապատասխան հսկողության քակ էր և Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա-ն, որի վրա վարկարեկիչ նյութեր էին հավաքում Միացյալ Պետական փաղափակյալ մարմինները:

1938 թ. մայիսի 5-ի լույս 6-ի գիշերը մահանում է Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա-ն: Պաշտոնապես հայտարարվում է, թե այն եղել է սրտի կաթվածի հետևանք: Գրականության մեջ կարծիքներ են հայանվել, որ Խորեն Ա-ն զոհվել է իշխանության մարմինների կողմից կազմակերպված անարբեղության հետևանքով: Մեզ հայտնի բոլոր հեղինակները որպես վկայություն են բերում կաթողիկոսի շարքի (խոհարար) Գեղամ Կրկյանի պատմամբ, որը իբրև իր աշխատակից է տեսել անարբեղության հետևանքը կաթողիկոսի մարմնի վրա և արվում է

նույնիսկ հանցագործությունը կատարած մարդկանցից մեկի անունը: Ինչպես պարզվում է մեր ուսումնասիրությունից, վերոնշյալ Գեղամ Կիլիկյանը 1938 թ. մարտի 29-ին ձերբակալվել էր ՀԽՍՀ ՊԲՎ-ն կողմից, հետևաբար նա կարողիկոսի մահվան օրը չէր կարող գտնվել ազատության մեջ: Կարողիկոսի նկատմամբ անաբեկչական գործողություն կատարելու վարկածը այլ փաստերով չի հիմնավորվում: Մեր հետազոտությունները այդ վարկածը հաստատող փաստեր գտնելու ուղղությամբ ՀՀ ԱՍՆ և այլ արխիվներում ևս արդյունքներ չտվեցին:

Ուշագրավ է, որ սկենայտ հալածանքների ենթարկվող Հայոց եկեղեցու ղեկավարներն, այնուամենայնիվ, փորձում էին օգնել բռնությունների ենթարկված հոգևորականներին, և ոչ միայն նրանց, այլև բռնադատվածների ընտանիքներին: Այդ գործողությունները կատարելու համար տվյալ տարիներին հարկավոր էր ունենալ մեծ պատասխանատվություն և կամք:

1937—38 թթ. բռնությունների ենթարկվեցին նաև հայ առաքելական եկեղեցու 79 ֆանաններ, 2 սարկավագ և 1 արեղա:

Հոգևորականության ներկայացուցիչները հիմնականում մեղադրվում էին հակահեղափոխական, դաշնակցական գործունեություն վարելու մեջ: Հատկանշական է, որ առանձնապես նկատելի էր այդ տարիներին Բեհական օրենսգրքի 70-րդ հոդվածի կիրառումը, որտեղ նշված է, թե պատժվում են այն անձինք, ովքեր ցարական ռեժիմի օրոք կամ «հակահեղափոխական» կառավարությունների մոտ ֆաղափարական պատերազմի շրջանում վարել են պատասխանատու կամ գաղտնի պաշտոններ: Դա հնարավորություն էր տվել մեղադրելու մարդկանց տասնյակ տարիներ առաջ այս կամ այն ազգային կուսակցությանը անդամագրված լինելու, ինչպես նաև 1921 թ. Հայաստանում փետրվարյան ապստամբության հետ ինչ-որ առնչություններ ունենալու համար:

Բռնությունները շրջանցեցին նաև Հայաստանում գործող հայ կաթոլիկ ու ավետարանական եկեղեցիների ներկայացուցիչներին: 1937—38 թթ. բռնադատվեցին կաթոլիկ եկեղեցին ներկայացնող 1 հոգևորական և ավետարանական եկեղեցու 5 ներկայացուցիչներ: Վերջիններիս մեջ էր Լեհիմականի ավետարանական համայնքի ղեկավար, ժամանակի կրթված ու զարգացած հոգևորական Ռաֆայել Մելիք-Աղամյանը, որը մեղադրվեց լրտեսություն կատարելու մեջ:

Նշված տարիներին բռնությունների ենթարկվեցին նաև Հայաստա-

նում գործող կրոնական մի շարք աղանդների՝ պրիգունների պոստոլանիների ներկայացուցիչներ և այլն:

Ուսումնասիրությունները վկայում են, որ 1937—38 թթ. հայ առաքելական, կաթոլիկ ու ավետարանական եկեղեցիները ներկայացնող հոգևորականներից գնդակահարվել են 88-ը, տասը տարվա ազատազրկման են ենթարկվել 11-ը, հինգ տարվա՝ 4-ը և մեկը ազատվել է նախնական կալանքի վերցնելուց հետո:

Եկեղեցու վիճակը իրավ օրհասական էր և 1938 թ. օգոստոսին ՀԿ(Բ)Կ ԿԿ բյուրոն որոշում է կայացնում փակել էջմիածնի վանքը, այն վերածելով քանդաքանի և նոր կաթոլիկոսի ընտրություններ չկատարել: Այդ առաջարկով նամակ է ուղարկվում ՀամԿ(Բ)Կ ԿԿ-ին, սակայն, աշխարհաֆաղափական նոր փոփոխությունները, բարեբախտաբար, կանխում են այդ մտահղացումները:

Գլուխ շորորդ. — «Իշխանություն և եկեղեցի առնչությունների հարցեր»:

1930-ականի վերջերին ԽՍՀՄ-ում կայունացավ ֆաղափարական համակարգը և վերջնականապես ձևավորվեց ու ամրապնդվեց Ստալինի անձի պաշտամունքը: Սակայն, համընդհանուր անաբեկչությունը ծայրահեղորեն լարել էր ֆաղափարական ներքին մրցույթը, որը վտանգել էր նաև իշխանավորների վիճակը: Միևնույն ժամանակ, լարվել էր միջազգային ֆաղափարական իրադրությունը՝ ուժ էր հավաքում ազգակնացվող ֆաշիստական Գերմանիան: Այդ պատկերի վրա, կառավարման ընդ ձեռքից բաց չթողնելու համար Ստալինը ստիպված էր գնալու ներքին կյանքի ասպարեզում մեղմացուցիչ փոփոխությունների, ուստի և 1938 թ. նոյեմբերի 17-ին նրա և ԽՍՀՄ Ժողովրդավարական կուսակցության Կենտրոնի ստորագրությամբ նամակ է ուղարկվում բոլոր տեղական կազմակերպություններին «Ձերբակալությունների, դատախազական վերանսկողության և բռնությունների վարելու մասին», որտեղ կրկին հիշեցնելով ԽՍՀՄ-ի բոլոր բնակիչների դեմ անխնա պայքար մղելու անհրաժեշտությունը, միևնույն ժամանակ նշվում է ՆԳԺԿ դատախազության մարմինների կողմից նախկինում բաց ավելի «խոշորագույն բերությունների և խեղաթյուրումների» մասին, որոնք «անց էին կացնում զանգվածային և անհիմն ձերբակալություններ»:

Նույն տարվա դեկտեմբերի 1-ին հրապարակվում է «Ձերբակալությունների կարգի մասին» որոշումը, որը կազմված էր նույնպիսի ոգով:

Այդ բնոյհանուր մտայնամբ քուլանում է բոնոքյունների ալիքը, որը իր ազդեցությունն է քողնում նաև իշխանություն-եկեղեցի հարաբերությունների վրա:

1930 թվականի սկզբներից ԽՍՀՄ-ում արմատավորվել էր մի երեւոյթ, որն իր բացասական լիցքն էր ավելացնում իրադարձությունների վրա: Դա մարդկային լայն զանգվածներում արտահայտվող համընդհանուր մատնության հոգեբանությունն էր: Բացի այդ, ՆԳՖԿ ՄՊՔՎ-մարմինները, բնականաբար, իրենց գործունեությունում օգտագործում էին գործակալների աշխատանքը եկեղեցականների մեջ:

Այստեղ կարևորվում է ոչ թե կոնկրետ գերատեսչության կատարած բացասական դերը, այլ այդ երևույթն իր ամբողջությամբ, երբ ստեղծված բարոյա-հոգեբանական դաշտը նպաստում և դրդում էր մատնությունների ու «բացահայտումների»:

Այդպիսով տեղի էին ունենում սեփական նախաձեռնությամբ կատարվող մատնություններ, հայտարարություններ, գրվում այդ բնույթի հոդվածներ և կայացվում ժողովի որոշումներ մինչև ՆԳՖԿ մարմինների «գործի լծվելը»:

Այդ ամենը դրսևորվում էր նաև հոգևորականության նեւտ առնչվող հարցերում: Առանձնապես կարևոր է նշել, որ 1920 թվից Հայաստանում առկա էր իշխանությունների կրոնամեթ դիրքորոշումը, որը արտահայտվում էր կրոնավայրերի փակումով, եկեղեցու հողերի և այլ հարստությունների առգրավումով, եկեղեցին ներսից խաբխելու փորձերով: Սակայն, մինչև 1929 թ. ներառյալ նկատելի չէ հոգևորականության զանգվածային ֆիզիկական հալածումը Հայաստանում: ԽՍՀՄ-ի իշխանությունների կրոնահալած ֆաղափականությունը կրում էր գաղափարական հենք և կոմունիստական գաղափարախոսության համար վնասակար երևույթ էր հռչակված: Հասկանալի է, որ կոմունիստական գաղափարախոսությունը որդեգրած երկիրը չէր կարող հանդուրժել իր էությունամբ մեծ ժողովրդավարություն վայելող, պատմության շուրջ 2000-ամյա ֆենությունը բռնած և իր գաղափարախոսության մեջ ձգող սկզբունքներ ունեցող եկեղեցին:

Զի բացառվում նաև այն, որ իշխանավորները կարող էին մտավախություն ունենալ, թե չեն դիմանա ֆրիստոնեական գաղափարախոսության նեւտ պատմական մեցակցությանը և զանգվածները զգալով, որ կյանքում չի իրագործվում կոմունիստական գաղափարախոսությունը՝ կարող էին իսկույն քեֆվել դեպի կրոնը:

Ձեռյած վերոհիշյալին, Հայաստանում նկատելի էր նաև այն, որ իշխանությունները մինչև 30-ական թվերի կեսերը, այնուամենայնիվ, սուշ Միութենական ֆաղափականությանը ոչ բնորոշ, տանելի վերաբերմունք էին ցույց տալիս, հատկապես դեպի Հայ առաքելական եկեղեցին: Այդ վարձագծի համար իր դերն ունեւ այն հանգամանքը, որ Հայոց եկեղեցին երկար հարյուրամյակներ պետականություն չունեցող ժողովրդի կյանքում խաղացել է ազգապանպան, ազգահավաք և անգամ դեկավարող դեր: Այն մեծ հեղինակությունը, որ Հայոց եկեղեցին ունեւ Հայաստանում, ինչպես նաև այդ տարիների այնպիսի դեկավարների գործունեությունը, ինչպիսիք էին Ա. Մյասնիկյանը և Ա. Խանջյանը, որոնք, անկախ ամեն ինչից, անկասկած ունեւին ազգային նկարագիր և խորապես բմբում էին հայ եկեղեցու նշանակությունը մեր ժողովրդի կյանքում:

Մյուս ոչ երկբորդական հանգամանքն այն էր, որ նակատագրի բերումով հայ ժողովուրդը ունեւ սփյուռք աշխարհի շատ երկրներում, որտեղ խիստ կարևորվել էր հայ առաքելական եկեղեցու դերը և վերջինս վայելում էր մեծ հեղինակություն: Այդ հանգամանքը, չնայած արտաֆուտ մեկուսացմանը և «երկարյա վարագույրի» առկայությանը՝ չէր կարող անտեսվել իշխանությունների կողմից:

Ավելացնենք մի կարևոր գործոն ևս: Հայ ժողովրդի համար քերես ամենանակատագրական պատմական ժամանակահատվածում, այն է՝ 1911 թ. մինչև 1938 թ. Հայ առաքելական եկեղեցու դեկավարներն էին մեծ հարգանք վայելող, իրապես խոշոր կրոնական գործիչներ Գևորգ Ե-ն և Խորեն Ա-ն, որոնց անձնական դերն ու նշանակությունը մեծ էր Հայաստանի իշխանության մարմինների նեւտ հարաբերությունների հարցերում:

Վիճակն էապես փոխվեց 1937—38 թթ., երբ ԽՍՀՄ-ում, տեղի ունեցած զանգվածային ֆաղափական բոնությունների ժամանակ զգալի կորուստներ կրեցին նաև Հայաստանում գործող բոլոր եկեղեցականներն ու կրոնական աղանդները:

Պատահական չէ, որ Խորհրդային իշխանություններն իրենց գոյատեւման վերջին շրջանում անդրադարձան նաև ստալինյան բոնություններին զոն գնացածների խնդրին և հրապարակեցին ԽՍՀՄ ԳԽ Նախագահության 1989 թ. հունվարի 16-ի որոշումը: Այն հնարավորություն բնձեռեց զանգվածաբար արդարացնելու անօրինական բոնադատված միլիոնավոր մարդկանց, այդ թվում Հայկական ԽՍՀ-ն բնակիչներին:

Նորանկախ Հայաստանի Հանրապետությունը իր բարոյական պարտքը համարեց կրկին անդրադառնալու այդ խնդրին և 1994 թ. հունիսի 14-ին ընդունվեց ՀՀ Օրենքի «Բռնադատվածների մասին»:

Տարիներ անց առանձնապես կարևորվում է այդ հայլի բարոյական նշանակությունը և այն վստահեցնող հանգամանք, որ այլևս Հայաստանում պետք է բացառվեն նման երևույթները:

Վերջաբան.— Ատենախոսության վերջաբանում ընդհանուր գծերով ամփոփված են ուսումնասիրության գլխավոր եզրակացությունները:

Տրված է 20-ական րվերին Հայաստանում գործող եկեղեցիների ու կրոնական տարբեր ուղղությունների ներկայացուցիչների վիճակը: Ուշադրություն է դարձվել այն հիմնավորմանը, որ, չնայած իշխանությունների կրոնամերժ գծին, Հայաստանում զանգվածային բնույթ չեն կրել հոգևորականների ֆիզիկական հետապնդումները:

Այնուհետև, համառաժամ կոլեկտիվացման շարժման օրերին նրկատվում են հատկապես գյուղական հոգևորականության զանգվածային հալածանքները: Օգտվելով այդ շարժման ընձեռնած պատեհությունից, կուլակարափման կամպանիայի մեջ ընկան բազմաթիվ հոգևորականներ:

1930—36 թթ. ՀՀ ԱԱՆ արխիվի տվյալներով գրանցվել է 117 բրոնության դեպք տարբեր կրոնական ուղղություններ ներկայացնող հոգևորականների նկատմամբ:

Իշխանությունների վարած քաղաքական նպատակները քստ էության արտահայտվել են 1930 թ. մարտի 22-ի ԽՍՀՄ ՆԳՖԿ ՄՊՔՎ-ն «եկեղեցական շարժման վիճակի և հեռանկարների ու ՄՊՔՎ մարմինների հետագա խնդիրների մասին» շրջաբերական նամակում, որը փաստորեն գործողությունների ծրագիր էր ողջ 30-ական րվերի համար:

1937—38 թթ. ԽՍՀՄ-ում կիրառվող քաղաքական բռնությունների զոն են դառնում նաև Հայաստանում գործող տարբեր կրոնական ուղղությունների և աղանդների 104 ներկայացուցիչներ: Այդ տարիներին նկատելի է բարձրաստիճան հոգևորականների հալածանք: Ըստ էության, հոգևորականության նկատմամբ կիրառված բռնություններն 1938 թ. վերջին Հայ առաքելական եկեղեցին կանգնեցրել էր լինել չլինելու խնդրի առաջ: ՀԿ(Բ)Կ Կենտկոմն առաջարկ է ուղարկում Մոսկվա էջմիածնի վանքի փակելու և նոր կարողիկոսի բնտրություններն արգելելու մասին: Սակայն, միջազգային դրության կարուկ փոփոխություն-

ները խանգարեցին այդ սրժումների իրականացմանը և Հայոց եկեղեցին, դիմակայելով բոլոր դժվարություններին, կրկին ուսի կանգնեց ու շարունակեց իր հայանպաստ գործունեությունը:

Տասնյակ տարիներ անց վերանայվեցին 1930-ական րվերին ԽՍՀՄ-ում բռնությունների ենթարկված մարդկանց գործերը և ննշող մեծամասնությունը արդարացվեց: Գրանց րվում էին նաև Հայաստանի Հայ առաքելական, կաթոլիկ և ավետարանական եկեղեցին ներկայացնող 144 հոգևորականները: Մյուսների գործերում արդարացման մասին նրժումներ չկան:

Եկեղեցու պատմության տվյալ հատվածի ուսումնասիրությունը խիստ ուսանելի է և կարևոր: Այն, ավելացնելով մեր գիտելիքները, միաժամանակ հիշեցնում է, որ անհրաժեշտ է գիտենալ անցյալը՝ ապագայում սխալներից խուսափելու համար:

Հավելվածում ներկայացվում են ԽՍՀՄ ՄՊՔՎ 1930 թ. մարտի 22-ի շրջաբերական նամակը «եկեղեցական շարժման վիճակի ու հեռանկարների և ՄՊՔՎ մարմինների հետագա խնդիրների մասին», ԽՍՀՄ Զինվորական դատախազության գեղապետ Ա. Վիտիևսկու 1956 թ. հունվարի 7-ի տեղեկանքը «Հայաստանի Կ(Բ)Կ Կենտկոմի նախկին 1-ին քարտուղար Աղասի Ալոնդի խանչյանի մանվան (հուլիս 1936 թ.) պատնառների ստուգման արդյունքների մասին» և հինգ աղյուսակ, կազմրված ՀՀ ԱԱՆ արխիվի ԿԳՖ-ի նյութերով: Այդ փաստաթղթերը խիստ կարևոր նշանակություն ունեն ատենախոսությունում բննարկված խընդիրների ամբողջական ուսումնասիրության համար:

Ատենախոսության հիմնական դրույթները շարադրված են հեղինակի հետեյալ հոդվածներում.

1. Եկեղեցին Հայաստանում 1930-ական րվերին, «Բանքեր Նրևանի համալսարանի», 1996, 2, էջ 188—199:

2. Ատուպատականի քեմի առաջնորդ պրեկպիսկոպոս Ներսես Մելիք-Քանգյանը և Ներքին գործերի ժողովրդական կոմիսարիատը, «Իրան-Նամե», 1996—1997, 22—23, էջ 7—8:

3. Եկեղեցին Հայաստանում 1930—1936 թ., «Նորհ», 1997, 1, էջ 80—84:

4. Հայ առաքելական եկեղեցին 1937—1938 թթ. ստալինյան բռնությունների տարիներին, «Գառուն», 1997, 1, էջ 66—69:

5. Ամենայն Հայոց կաթողիկոս Խորեն Ա, «Վազեռազեր Հայ եկեղեցու պատմության», կազմեց Ս. Բենրուդյանը, գ. Բ, եր., 1996, հավելված, էջ 581—584:

А. С. МАНУКЯН

СОВЕТСКАЯ ВЛАСТЬ И ЦЕРКОВЬ В АРМЕНИИ 1920—1940 ГГ.

РЕЗЮМЕ

На соискание ученой степени кандидата исторических наук, в виде диссертации, представляется исследование взаимоотношения властей—церкви и религиозных сект в Армении с 1920 по 1940 г. Особое внимание обращено на изучение проблемы взаимоотношений власть—церковь, в том числе ОГПУ, НКВД—церковь, положение религиозных деятелей и представителей религиозных сект в годы политических репрессий в СССР и др.

Диссертация написана на основе армянских и иноязычных источников, исторических исследований и публикаций.

Диссертация состоит из введения, четырех глав, заключения и приложения.

Во введении даны цель и задачи диссертационной работы, представлена общая характеристика источников и литературы по теме.

В первой главе — «Религиозные организации в 1920-ых годах» изучены положения церковных и других религиозных течений в Армении.

Вторая глава — «Церковь в условиях коллективизации сельского хозяйства». В этой главе исследованы вопросы положения церкви в период сплошной коллективизации, когда подверглись репрессиям религиозные деятели сельских местностей.

Третья глава — «Священнослужители в период усиления политических репрессий (1937—1938 гг.)». Здесь исследованы причины и масштабы репрессий, осуществляемые властями в отношении священнослужителей в указанные годы.

Четвертая глава — «Вопросы связей властей и церкви». В этой главе исследованы некоторые ключевые проблемы взаимоотношений властей и церкви в Армении в 1920—1940 годах.

В заключении в общих чертах представлено значение, роль и место изучения истории взаимоотношений властей—церкви и религиозных сект Армении в 1920—1940 гг. в общей истории Армении и обобщены некоторые выводы, исходящие из исследуемой работы.

В приложении нашли место «Циркулярное письмо» ОГПУ СССР от 12 марта 1930 г. «О положении и перспективах церковного движения и дальнейшие задачи органов ОГПУ», справка полковника ВП СССР А. Витиевского от 7 января 1956 г. «О результатах причины смерти бывшего первого секретаря ЦК КП(б) Армении ХАНДЖЯНА Агаси Гевондовича, последовавшей в июле 1936 г.», а также пять таблиц, составленные на основании материалов ФПД архива МНБ РА. Эти документы имеют большое значение для всеобщего изучения проблем, исследованных в диссертации.

Կ Մ խ